

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Տաշիր	Ավագանու հերթական նիստ	21.02.2020թ.	11:30	Տաշիրի համայնքապետարանի նիստերի դահլիճ (ք.Տաշիր, Վ. Սարգսյան 94)

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-
Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հաաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 21-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Է. Արշակյան/

2) Հաաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Է. Արշակյան /

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Ս. Սարգսյան /

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան /

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

/Զեկուցող՝ ՍՊ Սարգսյան/

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ենթակայությամբ քաղաքային տնտեսությունը սպասարկող բյուջետային հիմնարկին գույք ամրացնելու մասին

/Զեկուցող՝ Խ՝ Մանուկյան /

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող գույքն օգտագործման տրամադրելու մասին

/Զեկուցող՝ Ս. Սարգսյան/

8. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին

/Զեկուցող՝ Լ. Ավետիկյան/

ՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 21-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հաստատանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 21-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ենթակայությամբ քաղաքային տնտեսությունը սպասարկող բյուջետային հիմնարկին գույք ամրացնելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող գույքն օգտագործման տրամադրելու մասին
8. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին

ՈՐՈՌՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ

**ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով,

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

**ՈՐՈՐՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 21-ի N13-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Եկամուտների վերլուծություն

Տաշիր համայնքի 2019 թվականի բյուջեն եկամուտների գծով կատարվել է 105 %-ով, բյուջեով նախատեսված 424142,5 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 445489,0 հազար դրամ,:

- Սեփական եկամուտների գծով կատարվել է 115.3 %-ով, բյուջեով նախատեսված 151543,4 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 174783,5 հազ. դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են /174783,5-135305,2/=39478,3 ազ. դրամով:
որից՝
Հողի հարկի գծով նախատեսված 25183,2 դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 20256,0 հազար դրամ, կատարվել է 80.4 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 3378.2 հազ դրամով կամ 20 %-ով:

Գույքահարկի գծով փաստացի մուտքը 42438.4 հազար դրամի դիմաց կազմել 57184,8

հազար դրամ, կատարվել է 134.7 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 11089.9 հազար դրամով կամ 24%-ով:

Տեղական տուրքերը նախատեսված 4676.8 հազար դրամի դիմաց կազմել են 4456.2 հազար դրամ, կատարվել է 95.3 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 969.5 հազ. դրամով կամ 27.8%-ով :

Պետական տուրքերի գծով փաստացի մուտքը նախատեսված 5000,0 հազար դրամի դիմաց կազմել է 4271,3 հազար դրամ, կատարվել է 85 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 285.6 հազար դրամով կամ 6.7%-ով:

Գույքի վարձակալությունից եկամուտները կատարվել են 125 %-ով, նախատեսված 37887.0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 47331.8 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 12652.8 հազար դրամով կամ 36.5 %-ով :

Վարչական գանձումները՝ (տեղական վճարներ) նախատեսված 35908,0 հազար դրամի դիմաց կազմել են 30666.3 հազար դրամ, կատարվել է 85.4 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 5088.1 հազար դրամով, որից աղբահանության համար վարձավճարը նախատեսված 18000.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 13425.1 հազար դրամ, կատարվել է 74.6 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ հավաքագրվել է 3425.0 հազար դրամով ավել :

Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ –ի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կատարվել են 483 %-ով, նախատեսված 450.0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 2175.0 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ հավաքագրվել է 1111.0 հազար դրամով ավել :

Այլ եկամուտները կազմել են 8422.1 հազար դրամ նախորդ տարվա համեմատությամբ աճել են 6338.0 հազար դրամով:

- Պաշտոնական դրամաշնորհների գծով բյուջում նախատեսված 239569.7 հազար դրամ կատարվել է 100%-ով:
- Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 236535.8 հազար դրամը ստացվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 28875.4 հազար դրամով:

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիա բյուջեով չի նախատեսվել, հատկացում չի եղել:

Պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումը (սուբվենցիա) նախատեսված երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային , փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար նախատեսված 3033.9 հազար դրամով կատարվել է 100%-ով:

Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ,,Տաշիր համայնքի բ/շ տանիքների վերանորոգման,, ծրագրի համար/ հատկացվել է 4534,2 հազար դրամ , փողոցային լուսավորության ընդլայնման ծրագրի համար 12186,0 հազար դրամ, մարզադպրոցի շենքի վերանորոգման ծրագրի համար 3139,18 հազար դրամ և մարզագույք ձեռք բերելու ծրագրի համար 947,92 հազար դրամ սուբվենցիա :

ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից նախատեսված 3436.5 հազար դրամը կատարվել է 100 %-ով ;

- Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գծով բյուջեն կատարվել է 362 %-ով, նախատեսված 2500.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 9060.7 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 4845.3 հազար դրամով
- Բյուջեի տարեսկզբի ազատ մնցորդը / հավելուրդը կամ դիֆիցիտը/ կազմել է 59843.1713 հազար դրամ:

2. ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Ըստ գործառնական դասակարգմամբ

Տաշիր համայնքի 2019 թվականի բյուջեն ծախսերի գծով կատարվել է 86,5 %-ով, նախատեսված 467656,6 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 404684,6 հազար դրամ, որից 357962,5 հազար դրամը վարչական բյուջեի մասով, իսկ 46722,1 հազար դրամը ֆոնդային բյուջեի մասով: Ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 72661,3 հազար դրամով:

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը նախատեսված 146991,1 հազար դրամի դիմաց կազմել են 134243,2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 91,4 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 32520,6 հազար դրամով: Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի մեջ աշխատակազմի պահպանման ծախսերը նախատեսված 96140,0 հազար դրամի դիմաց կազմել են 91576,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 95,2 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 7451,0 հազար դրամով:
- Տնտեսական հարաբերությունների բնագավառով ճանապարհային տրանսպորտ նախատեսված 7980.0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 2853,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 35,8 %: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1825,5 հազար դրամով: Տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկանող նախատեսված/ հողի և գույքի օտարումից/ 2500,0 հազար դրամի դիմաց մուտքերը կազմել են 9060,7 հազ.դր Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 4845,3 հազար դրամով
- Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 87240,0 հազար դրամի դիմաց կազմել են 83003,5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 95,1 %: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 14225,0 հազար դրամով:
- Բնակարանային շինարարության և կոմունալ տնտեսության գծով ծախսերը նախատեսված 82523,0 հազար դրամի դիմաց կազմել են 56525,4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 68,5 %: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 25997,6 հազար դրամով:
- Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառով նախատեսված 39831,9 հազար դրամի դիմաց կազմել են 35954,8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 90,3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 18182,8 հազար դրամով:
- Կրթության բնագավառով նախատեսված 101027,0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 99055,4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1830,3 հազար դրամով:

- Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 2280.0 հազար դրամի դիմաց կազմել են 2110,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 92,5%: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 355.0 հազար դրամով:
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդի մնացորդը կազմել է 283,6 հազար դրամ:

2.2 Ըստ տնտեսագիտական դասակարգմամբ

Ըստ տնտեսագիտական դասակարգմամբ Տաշիր համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսերը նախատեսված 467656,6 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 404684,6 հազար դրամ կամ կատարվել է 86,5 % , որը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 72661,3 հազար դրամով:, որից՝

- Աշխատավարձի հոդվածով նախատեսված 109554,8 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 107132,7 հազար դրամ կատարվել է 97,8 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 4231,7 հազար դրամով
- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսված 154086,7 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 134213,4 հազար դրամ, կատարվել են 87,1 % Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 11042,0 հազար դրամով
- Դրամաշնորհների գծով նախատեսված 112034,5 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 111353,2 հազար դրամ, կատարվել են 99,4%: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 29950,7 հազար դրամով:
- Սոցիալական նպաստների գծով նախատեսված 2320,0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 2110,0 հազար դրամ, կատարվել են 90,9%: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 315,0 հազար դրամով:
- Այլ ծախսերի գծով նախատեսված 6033,6 հազար դրամի դիմաց կազմել են 3153,3 հազար դրամ, կատարվել են 52,3 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 1279,2 հազար դրամով:
- Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նախատեսված 86127,0 հազար դրամի դիմաց կազմել են 55782,7 հազար դրամ, կատարվել են 64,8 % : Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 39151,4 հազար դրամով

ՆԱԽԱԳԻԾ 14-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՍԵՎԱԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրկանացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՈՐՈՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ

ՍԵՎԱԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 21-ի N14-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒ**

	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը	2018	2019	2020	2021	2022	Համայնքի բյուջե	Հիմնադրամ /այլ	Պետական բյուջե
1.	Համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրելատեղի, արոտ տանող դաշտամիջյան ճանապարհ) կառուցապատման կապալային աշխատանքներ	դրամ	արոտավայրի ճանապարհի վերանորոգում-7 հատ	30963660		30963660				10515960	20447700	
			ջրագծի և ջրախմոցի կառուցում-16 հատ									
2.	Տաշիր քաղաքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդարձակման աշխատանքներ	դրամ	153 հատ լուսատու	20310000		20310000				8124000		12186000

3	Տաշիրի համայնքապետարանի կարիքների լուսավորության ապրանքների ձեռքբերում	դրամ	Լամպ՝	300	586800		586800				1626.5		
			էկոնոմ, 95	հատ									
			Վտ, 260										
			մմ, E27,										
			220 Վ										
			Լամպերի	12	132000		132000						
			ստարտերներ	հատ									
			Էլեկտրական լար	7400	614200		614200						
			մետր										
			Ավտոմատ	12	180000		180000						
			անջատիչ	հատ									
			Էլեկտրական լամպ	150	13500		13500						
				հատ									
			Մեկուսիչ	200	100000		100000						
			ՏՖ-20	հատ									
4	Լուսավորության հենասյուների վրա լուսատուների տեղադրման համար հենակների	դրամ	70 հատ		210000		210000				210000		

	պատրաստում											
5	20 հա հողի վարելու, փխրեցնելու/կուլտ իվացիա/, փոցխելու և ցանելու աշխատանքներ	դրամ	20 հա	658000		658000				658000		
6	Լուսավորության ապրանքներ	դրամ	Լուսարձակներ լուսադիոդային 30Վ, LED OUTDOOR LIGHT ֆիրմայի	6 հատ	48000		48000			160800		
			Լուսարձակներ լուսադիոդային 20Վ, LED FLOOD LIGHT OUTDOOR	6 հատ	28800		28800					

			Ֆիրմայի										
			Լուսարձակն եր լուսադիոդայ ին 100Վ, LED OUTDOOR LIGHT Ֆիրմայի	4 հա տ	84000		84000						
	Ընդամենը				53928960		53928960				21295260	20447700	12186000

ՆԱԽԱԳԻԾ 15-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 98-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի բ) կետով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝
Տաշիր համայնքի ավագանին որոշում՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2019թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N98-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ 16-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՍԵՎԱԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝
Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍԵՎԱԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 17-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ
ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԳՈՒՅՔ
ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԽԱԶԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, 163-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ենթակայամբ քաղաքային տնտեսությունը սպասարկող բյուջետային հիմնարկին իր գործունեության նպատակներին, Տաշիրի համայնքապետարանի հանձնարարություններին և իրեն ամրացված գույքի նշանակությանը համապատասխան՝ տիրապետելու, օգտագործելու նպատակով, անժամկետ , անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել գույք՝ համաձայն հավելվածի:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԽԱԶԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020թվականի փետրվարի 21-ի N17-Ա որոշման

Հ/հ	Տեխնիկայի համառոտ բնութագիրը				
	Տիպը	Պետական համարանիշ	Արտադրության տարեթիվ	Շարժիչի հզորությունը	Գինը
1	Էքսկավատոր JCB 3CX	204LL	2019	68,6կվտ	38200000
2	Գրեյդեր GC-10.07	205 LL	2019	70,2կվտ	33500000

3	Աղբատար մեքենա ՄԱՁ – 490143-390	807 LL 70	2019	155ձ.ուժ	24700000
4	Մինիամբարձիչ CAT246D	1990LL	2018		28622400
5	Ինքնաթափ	834 LL70	2019	400ձ.ուժ	32800000

ՆԱԽԱԳԻԾ 18-Ա

**ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ
ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Ձեկ. ՍԵՎԱԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ /**

Ղեկավարվելով «Տեղկան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1 Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Բլագոդարնոյե, 1-ին փողոց, թիվ 34 հասցեում գտնվող Բլագոդարնոյե բնակավայրի վարչական շենքի 30 քմ տարածքով աշխատասենյակը «ԱՅՔՕՄ» ՍՊԸ-ին 3 տարի ժամկետով օգտագործման տրամադրելուն, որի դիմաց «ԱՅՔՕՄ» ՍՊԸ-ն պարտավորվում է Բլագոդարնոյե բնակավայրի վարչական շենքին անհատույց 3 տարի ժամկետով մատուցել ինտերնետային ծառայություն:

2. Տաշիր համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՅ
ՍԵՎԱԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 19-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻԿՅԱՆ

Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, Տաշիր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 3-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ

ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻԿՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 21-ի N-19-Ա որոշման

1) Թագազյուլ Արմենակի Խաչատրյան 10000/տասը հազար դրամ/, սոց.օգնություն
(Անուն, ազգանուն, հայրանուն)

2) Սերոբ Քերոբի Սուքիասյան 10000/տասը հազար դրամ/, սոց.օգնություն
(Անուն, ազգանուն, հայրանուն)

3) Սվետլանա Սեմյոնի Մանուկյան 15000/տասնհինգ հազար դրամ/,
սոց.օգնություն
(Անուն, ազգանուն, հայրանուն)

4) Բուրաստան Նապոլեոնի Սուքիասյան 15000/տասնհինգ հազար դրամ/,
սոց.օգնություն
(Անուն, ազգանուն, հայրանուն)

- 5) Անի Ռազմիկի Սարգսյան 15000/տասնհինգ հազար դրամ/
սոց.օգնություն
(Անուն, ազգանուն,հայրանուն)
- 6) Զուրիկ Մարգարի Վարդանյան 15000/քսան հազար դրամ/, սոց.օգնություն
(Անուն, ազգանուն,հայրանուն)
- 7) Շուշիկ Սարգսի Ավետիսյան 20000/քսան հազար դրամ/, սոց.օգնություն
(Անուն, ազգանուն,հայրանուն)
- 8) Կարեն Անդրանիկի Հովսեփյան 25000 /քսանհինգ հազար դրամ/
սոց.օգնություն
(Անուն, ազգանուն,հայրանուն)

Ընդամենը՝ 125000 /հարյուր քսանհինգ հազար/